2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Պետական մարմինը՝ ՀՀ ԿԳՄՍՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Հայտի հաստատման ամսաթիվը՝

1. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2025-2027 թվականների հիմնական նպատակներն ու վերջնական արդյունքի չափորոշիչները[1].

Նպատակներ են՝

1. Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում.
2. Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում.
3. Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, հայագիտական, հումանիտար և հասարակական գիտությունների առաջանցիկ զարգացման ապահովում.

Վերոնշյալ նպատակների վերջնական արդյունքի չափորոշիչներն են՝

1. Ոլորտային համալիր հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումներով վերանորոգված և վերազինված գիտական կենտրոնների, գիտական կազմակերպություններում կամ բուհերում առկա առևտրայնացման պոտենցիալ ունեցող մշակումները վերհանող և դրանց առևտրայնացման գործընթացն ուղղորդող կառույցի, գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատման և ներդրումների ազգային հիմնադրամի, հետազոտությունների համար ավելի նպաստավոր միջավայրի, ինչպես նաև մարդկային և ֆիզիկական ռեսուրսի արդյունավետ օգտագործման պայմանների, գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի, ինչպես նաև Եվրոպական շրջանակային ծրագրերին Հայաստանի մասնակցության խթանման մեխանիզմների առկայություն:
2. Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ու հետդոկտորական հետազոտությունների ծրագրերի իրականացման

[1] *Քաղաքականության նպատակների և թիրախների մասին տեղեկատվությունը կից ներկայացվում է պահանջվող ձևաչափով Հավելված 3-ի Մաս 3-ում:*

ուղղված ծրագրերի, ինչպես նաև աշխարհի լավագույն գիտական կենտրոններում վերապատրաստված գիտաշխատողների առկայություն:

3. Հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանում, կատարողականի գնահատման մեխանիզմների, հեռավար ղեկավարվող լաբորատորիաների, հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների, երկակի նշանակության, կիրառական արդյունքի ձեռքբերման, պետական կարիքներից բխող, գերակա ուղղություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի, ինչպես նաև հիմնարար հետազոտությունների ծրագրերի ընտրության մրցակցային մեխանիզմների առկայություն:

2. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2025-2027 թվականների համար առաջնահերթ են[2]՝

1. Մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացում՝

Գիտական գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացման կարևորագույն գրավականներից է գիտական ենթակառուցվածքների զարգացածությունը, որը հնարավորություն է տալիս իրականացնելու մրցունակ գիտական հետազոտություններ ոչ միայն ժամանակակից գիտական սարքավորումների և նյութերի միջոցով, այլ նաև ընձեռելով գիտական գործունեության համար բարենպաստ ֆիզիկական միջավայր:

Նպատակին հասնելու համար **համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 27-րդ կետի՝**

[2] *Գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի վերոնշյալ ծախսային գերակայությունները հակիրճ շարադրված են նաև Մեթոդական ցուցումներին կից՝ Հավելված 12-ով ներկայացված ձևաչափում:*

- **27.1-ին ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինմանն ուղղված մրցութային ծրագրի իրականացումը, որոնց համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեի և ԵՄ դրամաշնորհային միջոցներից նախատեսված է հատկացնել՝ 7,464,544.9 հազ. դրամ, իսկ 2026-2027 թվականներին՝ 9,900,000.0-ական հազ. դրամ:
- **27.3-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել Հետազոտության բնագավառով մոտ փոքր գիտական կազմակերպությունները խոշոր գիտական կենտրոններում միավորմանն ուղղված պետական ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025-2027 թվականներին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 1,000,000.0-ական հազ. դրամ:
- **27.5-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է ստեղծել Գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատման և ներդրումների ազգային հիմնադրամ, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 10,000,000.0 հազ. դրամ:
- **27.6-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է ապահովել Գիտական և գիտատեխնիկական բնագավառում միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի կնքումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել համապատասխանաբար 600,000.0 հազ. դրամ, իսկ 2026-2027 թվականներին՝ 700,000.0-ական հազ. դրամ:
- **27.7-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է իրականացնել Եվրոպական շրջանակային ծրագրերի հետ ասոցացման և շրջանակային ծրագրերում Հայաստանի ակտիվ մասնակցության խթանմանը միտված ծրագրեր:

Մասնավորապես, զարգացած պետությունների և դրանց գերատեսչությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման նպատակով պետք է շարունակել՝

- համաֆինանսավորման սկզբունքով միջազգային ծրագրերի իրականացումը,

- անդամակցությունը գիտական կառույցներին/համագործակցություններին՝ «Հորիզոն Եվրոպա», Միջուկային Հետազոտությունների Միացյալ Ինստիտուտի (ՄՀՄԻ – JINR), Բարձր Էներգիաների Ստերեոսկոպիկ Համակարգի (ԲԷՍՀ - H.E.S.S.), Քլարիվեյթ Անալիտիքս, Միջազգայի գիտատեխնիկան կենտրոն, Էլզեվիեռ Ռեաքսիս:

Ներկայումս համաֆինանսավորման սկզբունքով ֆինանսավորվում են միջազգային համագործակցության 12 ծրագիր՝ նախկին 87-ի փոխարեն, (վերջինիս նվազումը պայմանավորված է հայ-բելառուսական, հայ-ռուսական և գիտական հետազոտությունների աջակցության Եվրասիական ասոցիացիայի հետ անցակցված գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի կատարման ժամկետի ավարտով), հայ-չինական մեկ լաբորատորիա, գործում է ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը:

2. Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացում և երիտասարդ կադրերի ներգրավում՝

Գիտության ոլորտում աշխատողների որակավորման բարձրացումը, երիտասարդ կադրերի ներգրավումը և գիտնականների աշխատավարձի և գիտության մրցունակության բարձրացման հիմնական գործիքներն են:

ՀՀ գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը:

Նպատակի ձեռքբերման համար իրականացվող քայլերը պետք է մի կողմից միտված լինեն գիտության ոլորտ երիտասարդ կադրերով համալրելուն, մյուս կողմից՝ միջին սերնդի գիտնականների թվաքանակի բարձրացմանը:

Նպատակին հասնելու համար **համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 28-րդ կետի՝**

- **28.1-ին ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցությանն ուղղված

մրցութային ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 1,550,000.0 հազ. դրամ, իսկ 2026-2027 թվականներին՝ 1,700,000.0-ական հազ. դրամ:

- **28.2-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել Գիտական կադրերի (PHD, PostDoc) վերապատրաստման մրցութային ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 582,400.0 հազ. դրամ, իսկ 2026-2027 թվականներին 761,600.0-ական հազ. դրամ:
- **28.3-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է իրականացնել Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագրերին ուղղված նոր մրցութային ծրագիր, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 1,400,000.0 հազ. դրամ, իսկ 2026-2027 թվականներին՝ 1,680,000.0-ական հազ. դրամ:

Պետք է շարունակել իրականացնել նաև՝

- երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունների աջակցության դրամաշնորհային մրցույթի կազմակերպում,
- գիտական խմբերի մեկնարկային և գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն ուղղված եռամյա կամ հնգամյա դրամաշնորհային մրցույթների կազմակերպում,
- առաջատար հետազոտությունների աջակցության ծրագիրը, երբ դրամաշնորհը հատկացվում է գիտական նշանակալի նվաճումներ ունեցող գիտաշխատողին՝ հետազոտական խումբ ձևավորելու և հավակնոտ թեմայով հետազոտական ծրագրեր իրականացնելու համար:

3. Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում՝

Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացումն իրականացվելու է հետազոտությունների միջազգային չափանիշների սահմանմամբ և կատարողականի գնահատման մեխանիզմների ներդրմամբ:

Նպատակին հասնելու համար **համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 29-րդ կետի՝**

- **29.1-ին ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է նախորդ տարվա նկատմամբ աշխատավարձի ֆոնդին ավելացնել՝ 2,010,078.0 հազ. դրամ:
- **29.3-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է իրականացնել գիտական կադրերի պատրաստման բոնուսային ծրագրեր բազային ֆինանսավորման շրջանակներում:
- **29.4-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է շարունակել վերաինտեգրման կամ հեռավար ղեկավարվող լաբորատորիաների ստեղծմանն ուղղված ծրագրի իրականացումը, որի համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 1,184,000.0 հազ. դրամ, 2026-2027 թվականներին՝ 1,676,000.0-ական հազ. դրամ:
- **29.6-րդ ենթակետի՝** անհրաժեշտ է իրականացնել հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառների հետազոտությունների աջակցությանն ուղղված նոր մրցութային ծրագրեր, որոնց համար ըստ վերոնշյալ որոշմամբ 2025 թվականին ՀՀ պետական բյուջեից նախատեսված է հատկացնել 1,200,000.0 հազ. դրամ, 2026-2027 թվականներին՝ 1,300,000.0-ական հազ. դրամ:

Պետք է շարունակել իրականացնել նաև՝

- արհեստական բանականություն և տվյալագիտություն, քվանտային տեխնոլոգիաներ, ռոբոտատեխնիկա մասնագիտություններով հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագիրը,
- երկակի նշանակության հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագիրը,
- 2022 թվականին առաջին անգամ հայտարարված փորձարարական մշակումների դրամաշնորհային ծրագիրը, որի գնահատման ժամանակ առաջին անգամ կիրառվել է տեխնոլոգիաների պատրաստության աստիճանի միջազգային սանդղակը (TRL grades):

3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

2025-2027 թվականների գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 1162 «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի պարտադիր և հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներն են[3]՝

Պարտադիր ծախսեր

- «11001 Գիտության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ»,
- «11002 Գիտական ենթակառուցվածքի արդիականացում», որն ուղղված է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացմանը, ծրագրերի իրականացմանը, գիտական սարքավորումների արդիականացմանը, միջազգային համագործակցության աջակցությանը,
- «11004 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն», որն ուղղված է «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, Հայոց-ցեղասպանության

[3] *Պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփվել է Մեթոդական ցուցումներին կից Հավելված 1-ի Ձևաչափ 1-ում ներկայացված աղյուսակում (գոյություն ունեցող պարտավորությունների մասով): Իսկ յուրաքանչյուր միջոցառման համար պարտադիր և հայեցողական ծախսերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացվել է Մեթոդական ցուցումներին կից՝ Հավելված 1-ի Ձևաչափ 2 -ում (գոյություն ունեցող պարտավորությունների մասով):*

թանգարան-ինստիտուտի, Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի պահպանմանը,

- «11005 Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային հետազոտություններ», որն ուղղված է գիտնականների և հետազոտական խմբերի նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացմանը,
- «11006 Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ», որն ուղղված է մրցութային հիմունքներով ընտրված գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող գիտատեխնիկական պետական ծրագրերի իրականացմանը,
- «11007 Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում», որն ուղղված է գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը,
- «11008 Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում», որն ուղղված է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանմանը և գիտական ներուժի արդիականացմանը, ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը,
- «11009 Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում», որն ուղղված է «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հիմնադրամի պահպանմանը և արագացուցչային փորձարարական լաբորատորիաների զարգացմանը, արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը,
- «11010 Էտալոնների պահպանում և զարգացում», որն ուղղված է ՀՀ ազգային էտալոնների պահպանմանն ու զարգացմանը,
- «11012 Գիտական գրադարանային ծառայություններ (գիտության ոլորտ)», որն ուղղված է գրադարանային հավաքածուների պահպանմանը և համալրմանը, ընթերցողների սպասարկմանը, գրադարանային միջոցառումների կազմակերպմանը,

- «11018 Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում», որն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը միտված գիտական և գիտատեխնիկական ներուժի գնահատմանը, առևտրայանացման ենթակա նորարարությունների և դրանց իրացման շուկաների բացահայտմանը, թվային հարթակի ապահովմանը,
- «12001 Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ», որն ուղղված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարների տրամադրմանը,
- «12002 ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարներ», որն ուղղված է ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրմանը,
- «32004 Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում», որն ուղղված է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացմանը,
- «Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում», որն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը:

3.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

2025-2026 թվականներին շարունակվելու են պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական

գործունեության ***բազային, գիտական դրամաշնորհային և պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորումները***[4]:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորումը հատկացվելու է միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից ընտրված՝ հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների, գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման, գիտական կադրերի պատրաստման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ապահովման, ինչպես նաև համատեղ օգտագործման գիտական սարքավորումների ձեռքբերման և միջազգային համագործակցության ծրագրերի իրականացման նպատակով (ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121-Լ որոշման համապատասխան): Միժամանակ, համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշման՝ 2022 թվականի հունվարի 1-ից առավելագույնը մեկ տարի առաջ գիտական կադրերի որակավորում անցած գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձը աստիճանական կավելանա՝ 2022-2025 թվականներին հասցնելով համապատասխանաբար հետևյալ ցուցանիշների՝

լաբորանտ կամ ճարտարագետ՝ 102.5 հազ. դրամ, 110.0 հազ. դրամ, 120.0 հազ. դրամ և 138.3 հազ. դրամ,

ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ՝ 110.0 հազ. դրամ, 130.0 հազ. դրամ, 156.0 հազ. դրամ և 179.0 հազ. դրամ,

կրտսեր գիտաշխատող՝ 120.0 հազ. դրամ, 150.0 հազ. դրամ, 180.0 հազ. դրամ և 210.0 հազ. դրամ,

---

[4] *Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններն ամփոփվել են Մեթոդական ցուցումներին կից Հավելված 3-ի Մաս 3-ում ներկայացված աղյուսակում:*

գիտաշխատող՝ 150.0 հազ. դրամ, 200.0 հազ. դրամ, 230.0 հազ. դրամ և 276.0 հազ. դրամ,

ավագ գիտաշխատող՝ 200.0 հազ. դրամ, 250.0 հազ. դրամ, 300.0 հազ. դրամ և 343.0 հազ. դրամ,

առաջատար գիտաշխատող՝ 250.0 հազ. դրամ, 350.0 հազ. դրամ, 420.0 հազ. դրամ և 443.8 հազ. դրամ,

գլխավոր գիտաշխատող՝ 367.1 հազ. դրամ, 450.0 հազ. դրամ, 500.0 հազ. դրամ և 552.9 հազ. դրամ,

գիտական խմբի ղեկավար՝ 230.0 հազ. դրամ, 280.0 հազ. դրամ, 350.0 հազ. դրամ և 410.0 հազ. դրամ,

գիտական ստորաբաժանման ղեկավար՝ 350.0 հազ. դրամ, 400.0 հազ. դրամ, 450.0 հազ. դրամ և 477.2 հազ. դրամ:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորումը հատկացվելու է որպես դրամաշնորհ՝ գիտական անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա, մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացման և գիտահետազոտական լաբորատորիաների աջակցության, միջազգային ճանաչում ունեցող գիտնականների նախաձեռնությունների խրախուսման նպատակով (ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշման համապատասխան):

Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորումը հատկացվելու է գերատեսչությունների կողմից մշակված, այդ թվում՝ երկակի նշանակության հիմնախնդիրների լուծման նպատակով: Կատարման ենթակա հիմնախնդիրների ցանկն ընտրվելու է միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի կողմից, հաստատվելու է ՀՀ կառավարության կողմից, իսկ դրանց լուծմանն ուղղված ծրագրերի ընտրությունն իրականացվելու է մրցութային կարգով (ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1123 որոշման համապատասխան):

ՀՀ ԱԺ 2021 թվականի օգոստոսի 26-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի «Գիտության ոլորտին» վերաբերող բաժնով առաջարկվող դրույթները և ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը ենթադրում են պետական բյուջեից գիտության ոլորտին հատկացվող ֆինանսական ծավալների ավելացում: Այդպիսի մոտեցումը պայմանավորված է ինչպես ժամանակակից տնտեսության և հասարակության զարգացման գործում գիտության առանցքային դերով, այնպես էլ հանրապետությունում գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման հրամայականով:

1. «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի միջոցառումների իրականացման համար պետական բյուջեով հատկացված ծախսերը (առանց պետական կառավարման մարմնի պահպանման ծախսերի) 2024 թվականին կազմում է **35,366,912.4 հազ. դրամ**, իսկ 2025-2026 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **49,154,686.0 և 41,905,656.9 հազ. դրամ, որից՝**

1) «11002 Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառումն ուղղված է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացմանը, ծրագրերի իրականացմանը, գիտական սարքավորումների արդիականացմանը, միջազգային համագործակցության աջակցությանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **13,788,315.7 հազ. դրամ,** իսկ 2025-2026 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **27,198,507.3 և 17,298,507.3 հազ. դրամ**, որից (ֆինանսական ծավալի աճը պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացից՝ *համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ*

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշմամբ ներդրված 2022-2025 թվականների բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 27.3, 27.5, 29.1 և 29.6 միջուցառումներից)՝

ա. 11,917,433.5 (2024թ.) և 13,133,420.7-ական հազ. դրամը (2025-2026թթ.) ուղղվելու է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների բազային ֆինանսավորմանը,

բ. 112,991.6 (2024թ.) և 969,311.6-ական հազ. դրամը (2025-2026թթ.) ուղղվելու է ՀՀ գիտական համայնքին ինտեգրված արտերկրյա գիտնականների աշխատանքի վարձատրության ապահովմանը,

գ. 862,115.6 (2024թ.) և 1,000,000.0-ական հազ. դրամը (2025-2026թթ.) ուղղվելու է գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցությանը,

դ. 1,200.000.0 և 1,300,000.0 հազ. դրամը (2025-2026թթ.) ուղղվելու է հասարակական, հայագիտության և հումանիտար գիտությունների հետազոտությունների աջակցությանն ուղղված ծրագրերի իրականցմանը,

ե. 15,000.0-ական հազ. դրամը (2024-2026թթ.) ուղղվելու է գիտության մասսայականացման աջակցությանը,

զ. 600,775.0-ական հազ. դրամը (2024-2026թթ.) ուղղվելու է միջազգային գիտական ծրագրերի, կառույցների անդամակցությանը և գիտատեղեկատվական շտեմարանի ռեսուրսների օգտագործմանը («Հորիզոն Եվրոպա», Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ, Բարձր էներգիաների ստերեոսկոպիկ համակարգ, Տեսական ֆիզիկայի միջազգային կենտրոն, Քլարիվեյթ Անալիտիքս),

է. 25,000.0-ական հազ. դրամը (2024-2026թթ.) ուղղվելու է համակարգի գիտական գործուղումների իրականացմանն աջակցությանը,

ը. 100,000.0-ական հազ. դրամը (2024-2026թթ.) ուղղվելու է «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցությանը,

թ. 10,000.0-ական հազ. դրամը (2024-2026թթ.) ուղղվելու է երիտասարդ գիտնականների դպրոցների կազմակերպմանն աջակցությանը**,**

ժ. 30,000.0-ական հազ. դրամը (2024-2026թթ.) ուղղվելու է գիտական միջոցառումների կազմակերպմանն աջակցությանը,

ժա. 15,000.0-ական հազ. դրամը (2024-2026թթ.) ուղղվելու է գիտական հայտերի և հաշվետվությունների ընդունման, փորձագիտական առցանց համակարգի պահպանման և գիտական փորձաքննության ֆինանսավորմանը,

ժբ. 10,000,000.0 հազ. դրամը (2025թ.) ուղղվելու է գիտությունից բիզնես ռիսկային նախաձեռնությունների գնահատմանը և ներդրումների ազգային հիմնադրամի ստեղծմանը,

ժգ. **100,000.0-ական հազ.դրամ (2024-2026թթ.)** ուղղվելու է միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում հրատարակությունների աջակցություն,

2) «11004 Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» միջոցառումն ուղղված է «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի, Հայոց-ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի պահպանմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **940,304.1 հազ. դրամ,** իսկ 2025-2026 թվականներին նախատեսվում է հատկացնել **962,891.3-ական հազ. դրամ** (ֆինանսական ծավալի աճը պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացից՝ *համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշմամբ ներդրված 2022-2025 թվականների բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային*

դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 29.1 միջուցառումից).

3) «11008 Բարձր էներգիաների ֆիզիկայի բնագավառի ենթակառուցվածքների արդիականացում» միջոցառումն ուղղված է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանմանը և գիտական ներուժի արդիականացմանը, ֆիզիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **948,500.3 հազ. դրամ,** իսկ 2025-2026 թվականներին նախատեսվում է հատկացնել **1,031,865.3-ական հազ. դրամ** (ֆինանսական ծավալի աճը պայմանավորված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացից՝ *համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշմամբ ներդրված 2022-2025 թվականների բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի*, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 29.1 միջուցառումից).

4) «11009 Արագացուցչային տեխնոլոգիաների զարգացում» միջոցառումն ուղղված է «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտի հիմնադրամի պահպանմանը և արագացուցչային փորձարարական լաբորատորիաների զարգացմանը, արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների

իրականացմանը, որի համար 2024 թվականի հատկացվել է **244,271.7 հազ. դրամ,** իսկ 2025-2026 թվականներին նախատեսվում է հատկացնել **257,961.2-ական հազ. դրամ** (ֆինանսական ծավալի աճը պայմանավրոված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացից՝ *համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 747-Լ որոշմամբ ներդրված 2022-2025 թվականների բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի*, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 29.1 միջուցառումից).

5) «11005 Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային հետազոտություններ» միջոցառումն ուղղված է գիտնականների և հետազոտական խմբերի նախաձեռնությամբ ներկայացված ու մրցութային կարգով ընտրված հետազոտական նախագծերի իրականացմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **9,295,722.0 հազ. դրամ,** իսկ 2025-2026 թվականներին նախատեսվում է հատկացնել **10,598,738.3 և 10,677,423.4 հազ. դրամ (**ֆինանսական ծավալի աճը պայմանավրոված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 27.6, 28.1, 28.2, 28.3, 29.4, 29.7, 29.8, 29.9 միջուցառումներից**), որի շրջանակներում ֆինանսավորվելու են՝**

ա. Գիտական դրամաշնորհային հետազոտությունները,

բ.Երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) հետազոտությունները,

գ. Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունները,

դ. Գիտական խմբերի մեկնարկային ծրագիրը,

ե. Գիտական խմբերի ամրապնդմանն ուղղված ծրագիրը,

զ. Առաջատար հետազոտությունների աջակցության ծրագիրը,

է.Արտերկրի լավագույն գիտական կենտրոններում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման միջին և երկարաժամկետ ծրագիրը,

ը. Գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագիրը,

թ. ՀՀ գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիրը,

ժ. ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիրը,

ժա. Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիրը,

ժբ. Երկակի նշանակության հետազոտությունների աջակցության ծրագիրը,

ժգ. Փորձարարական մշակումների նախագծերը,

ժդ. Արհեստական բանականություն և տվյալագիտություն, քվանտային տեխնոլոգիաներ, ռոբոտատեխնիկա մասնագիտություններով հետազոտությունների աջակցության ծրագիրը,

ժե. Միջազգային հեղինակավոր ցանկերում ներառված առաջատար ամսագրերում կամ հրատարակչություններում հրատարակությունների աջակցության ծրագիրը,

ժզ. «Հասարակական գիտություններ», «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների հետազոտությունների աջակցության ծրագիրը,

ժէ. Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագրերի աջակցության ծրագիրը,

ժը. Միջազգային գիտական համագործակցության շրջանակներում գիտական ծրագրերը:

6) «11006 Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» միջոցառումն ուղղված է մրցութային հիմունքներով ընտրված գիտության ու տեխնիկայի առաջնային ուղղություններին համապատասխանող

գիտատեխնիկական պետական ծրագրերի իրականացմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **152,883.0 հազ. դրամ,** իսկ 2025-2026 թվականներին նախատեսվում է հատկացնել **305,766.0-ական հազ. դրամ.**

7) «32003 Գիտական կենտրոնների վերանորոգում, «Ակադեմիական քաղաք» նախագծի իրականացման շրջանակներում առաջացած հրատապ ծախսերի ապահովում», միջոցառումն ուղղված է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **940,000.0 հազ. դրամ:** Վերոնշյալ միջոցառումը 2025 թվականից ներկայացված է Նոր նախաձեռնությամբ, որպես նոր ծրագրի նոր միջոցառում՝ ուղղված Ակադեմիական քաղաքի ստեղծմանը.

8) «32004 Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինում» միջոցառումն ուղղված է մրցունակ գիտական գործունեության համար նպաստավոր ենթակառուցվածքների զարգացմանը, որի համար 2024 թվականի հատկացվել է **4,200,000.0 հազ. դրամ,** իսկ 2025-2026 թվականներին նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար՝ **7,327,714.2 և 9,900,000.0 հազ. դրամ (**ֆինանսական ծավալի աճը պայմանավրոված է ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի գիտության ոլորտի 27.1 միջուցառումից**).**

- «12001 Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» միջոցառումն ուղղված է գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջետային ֆինանսավորման բազային ծրագրերում ներգրավված և առնվազն աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար ամենամսյա հավելավճարների տրամադրմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **842,000.0 հազ. դրամ,** 2025-2026 թվականներին նախատեսվում է պահպանել նույն ֆինանսական ծավալը (ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի N 33-Ն որոշման համապատասխան)**.**

9) «12002 ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարներ» միջոցառումն ուղղված է ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամների պատվովճարների տրամադրմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **112,200.0 հազ. դրամ,** 2025-2026 թվականներին նախատեսվում է պահպանել նույն ֆինանսական ծավալը (ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 6-ի N 102 որոշման համապատասխան).

10) «11010 Էտալոնների պահպանում և զարգացում» միջոցառումն ուղղված է ՀՀ ազգային էտալոնների պահպանմանն ու զարգացմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **45,000.0 հազ. դրամ,** 2025-2026 թվականներին նախատեսվում է պահպանել նույն ֆինանսական ծավալը.

11) «11007 Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակում» միջոցառումն ուղղված է գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **95,556.3 հազ. դրամ,** 2025-2026 թվականներին նախատեսվում է պահպանել նույն ֆինանսական ծավալը.

12) «11012 Գիտական գրադարանային ծառայություններ (գիտության ոլորտ)» միջոցառումն ուղղված է գրադարանային հավաքածուների պահպանմանը և համալրմանը, ընթերցողների սպասարկմանը, գրադարանային միջոցառումների կազմակերպմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **150,630.1 հազ. դրամ,** 2025-2026 թվականներին նախատեսվում է պահպանել նույն ֆինանսական ծավալը.

13) «11018 Հայաստանի Հանրապետությունում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորում և զարգացում» միջոցառումն ուղղված է ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության էկոհամակարգի ձևավորմանն ու զարգացմանը միտված գիտական և գիտատեխնիկական ներուժի գնահատմանը, առևտրայանացման ենթակա նորարարությունների և դրանց իրացման շուկաների բացահայտմանը, թվային հարթակի ապահովմանը, որի համար 2024 թվականին հատկացվել է **173,029.2 հազ. դրամ,** 2025-2026 թվականներին նախատեսվում է պահպանել նույն ֆինանսական ծավալը,

14) «Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում» միջոցառումն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում գիտական որակավորման, գիտական աստիճանի և գիտական կոչման վկայագրերի հանձնման, միջազգային կապերի զարգացման, ատենախոսությունների թվայնացման և գիտնականների շտեմարանների ստեղծման ու շահագործման գործընթացների իրականացմանը, որի համար 1192 ծրագրի «11005 Գիտական աստիճանաշնորհման և գիտամանկավարժական կոչումների շնորհում» միջոցառման շրջանակներում 2024 թվականին հատկացվել է **52,826.9 հազ. դրամ:** Վերոնշյալ միջոցառումը 2025 թվականից ներառվելու է 1162 ծրագրում, որի համար 2025-2026 թվականներին հատկացվելու է **52,826.9-ական հազ. դրամ:**

Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսային ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է Մեթոդական ցուցումներին կից Հավելված 1-ի Ձևաչափ 1-ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

Գոյություն ունեցող ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ծախսակազմումներն (ծախսերի մանրամասն հաշվարկներն) ու հիմնավորումներն ըստ առանձին գործոնների ներկայացված են Մեթոդաբանության առանձին առդրված ծախսերի հաշվարկների մանրամասն ձևաչափերին համապատասխան:

Գոյություն ունեցող բոլոր ծրագրերի/միջոցառումների (ծախսային պարտավորությունների) գծով ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ծախսերն ու ակնկալվող արդյունքները ներկայացված են ամփոփ տեսքով՝ Մեթոդաբանության կից՝ Հավելված 3-ի Մաս 4-ում ներկայացված ձևաչափերին համապատասխան: Այդ ծրագրերի/միջոցառումների գծով ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգումների մանրամասների ներկայացված են Մեթոդաբաությանը կից՝ Հավելված 4--ում ներկայացված ձևաչափերին համապատասխան:

3.3. Նոր նախաձեռնությունները

Նոր նախաձեռնությունների շրջանակներում առաջարկվում է նոր ծրագիր ուղղված Ակադեմիական քաղաքի ստեղծմանը, որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ: Ծրագիրն իր մեջ ներառում է «Ակադեմիական քաղաքի նախագծման, կառուցման և բովանդակային գործընթացների ապահովում» և ««Ակադեմիական քաղաք» ծրագրի համակարգման և մոնիտորինգի ծառայություններ» միջոցառումները:

«Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի իրականացումը բխում է՝

✓ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հավելվածի 82-րդ կետի 4)-րդ ենթակետի դ. պարբերությունից,

✓ Օրենքից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին 2023 թվականի մարտի 16-ի N 351-Լ որոշման հավելված 1-ի՝ Նպատակ 2 «Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում» 2.2 «Ցանցային կրթական համակարգերի ներդրում և ենթակառուցվածքների բարելավում» մասի 2.2.2 «Ակադեմիական քաղաքի ստեղծում՝ որպես որակյալ բարձրագույն կրթության և հետազոտության համար արդիական կրթական միջավայրի ապահովման կամպուսային կլաստերների համախումբ» կետից,

✓ 2021-2026 թվականների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի» 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» կետի 4.3 «Կրթություն» մասով սահմանված՝ բարձրագույն կրթության ոլորտում ֆիզիկական, վիրտուալ և սոցիալական գրավիչ միջավայր ապահովելու համար ակադեմիական քաղաք հիմնելու ռազմավարական նպատակից,

✓ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված 1-ի «Կրթություն» բաժնի 20-րդ՝ «Ակադեմիական քաղաքի հիմնադրման հայեցակարգի մշակում» կետից,

✓ ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N 1802-Լ որոշմամբ հաստատված «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգից, որով սահմանվել են Ակադեմիական քաղաքի ստեղծման նպատակներն ու խնդիրները, Ակադեմիական քաղաքի կլաստերները (բաղադրիչները), շահառուների նախատեսվող թիվը և շրջանակը, ենթակառուցվածքները և այլ դրույթներ:

Հաշվի առնելով, որ Ակադեմիական քաղաքը հանդիսանում է Օրենքով սահմանված մի շարք կարևորագույն թիրախների ապահովման առանցքային միջոց, ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ, որն իրականացնելու է կանոնադրությամբ ամրագրված հետևյալ գործառույթները՝

✓ Ակադեմիական քաղաքի նախագծումն ու կառուցումը՝ որպես որակյալ կրթության և հետազոտության համար արդիական միջավայր,

✓ համապատասխան շենքային ենթակառուցվածքների կառուցումը, պահպանումը և բարելավումը,

✓ հետազոտությունը և ուսումը խթանող, գրավիչ, ապահով և անվտանգ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական և ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած համագործակցային միջավայրի ստեղծումը՝ հաշվի առնելով ոլորտների արդի և զարգացող մեթոդաբանությունը, անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները,

✓ մարզադահլիճների, գրադարանների, նորարարական ոճով կահավորված անհատական և թիմային աշխատանքների տարածքների, ինչպես նաև ստեղծարար գործունեությանը նպաստող ֆիզիկական միջավայրի ստեղծումը,

✓ ակադեմիական քաղաքի հայեցակարգից բխող այլ գործողությունների իրականացումը:

«Ակադեմիական քաղաքի ստեղծում» ծրագրի թիրախներն են՝

✓ առնվազն չորս բուհ ընդգրկված կլինի միջազգային վարկանիշային (Թայմսի բարձրագույն կրթության՝ աշխարհի համալսարանների վարկանիշ – Times Higher Education World University Rankings, Աշխարհի համալսարանների քյուէս վարկանիշ - QS World University Rankings կամ Աշխարհի համալսարանների ակադեմիական վարկանիշ - ARWU, Shanghai Ranking) աղյուսակների լավագույն 500-ի մեջ,

✓ կստեղծվի 100% պետական ֆինանսավորմամբ մինչև ութ բուհ՝ չբացառելով վճարովի ուսուցման հնարավորությունը,

✓ Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ձեռք կբերի միջազգային հեղինակություն, որի շնորհիվ օտարերկրյա ուսանողների թիվն առնվազն կկրկնապատկվի,

✓ առկա է միջավայր, որը կխթանի և կերաշխավորի ժամանակակից հետազոտական և նորարարական գործունեությունը, որտեղ բարձրագույն կրթությունը լծորդվելու է հետազոտությունների և գործնական կիրառման հետ,

✓ ձեռք բերված գիտելիքների և արդյունքների կիրառելիության և առևտրայնացման խթանում,

✓ առկա է մտավոր և մշակութային ժամանցի համար նախատեսված միջավայր,

✓ առկա է գիտական և նորարարական փոխկապակցվածությունը երաշխավորող միջավայր,

✓ առկա են նորարարությունը և փորձարարությունը խթանող ենթակառուցվածքներ:

2023 թվականին «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման շրջանակներում՝

✓ ճարտարապետական նախագծման ծառայությունները ձեռք բերելու նպատակով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1841-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն ՋիԷմՓի ինթերնեյշնլ ՋիԷմԲիԷյջ արքիթեքթս ընդ էնջինիերս (GMP) գերմանական ընկերության և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ կնքել է «Ճարտարապետական նախագծման ծառայությունների մասին» պայմանագիր, որով նախատեսված ծառայությունների վճարումները (87,696.0 հազ. դրամ) իրականացվել են ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի «32003 Գիտական կենտրոնների վերանորոգում» միջոցառման համար նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին.

✓ ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի ««Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ստեղծելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու

մասին» N 585-Ա որոշման համաձայն «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի պահպանման ծախսերը նախատեսված է իրականացնել «1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների» ծրագրի «11002 Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման շրջանակներում: 2023 թվականի հատկացվել է 35,015.0 հազ. դրամ, իսկ 2024 թվականին՝ 117,320.0 հազ. դրամ,

✓ ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարիի 4-ի N 28-Ն որոշմամբ հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծը:

Նոր ծրագրի համար անհրաժեշտ է 2025-2027 թվականներին հատկացնել համապատասխանաբար՝ 2,114,076.3, 5,023,521.7 և 240,292,807.4 հազ. դրամ, որից՝

- **2025-2027 թվականներին համապատասխանաբար՝ 1,939,630.3, 4,849,075.7 և 240,118,361.4 հազ. դրամ հատկացվելու է Ակադեմիական քաղաքի նախագծման, կառուցման և բովանդակային գործընթացների ապահովում,**
- **2025-2027 թվականներին 174,446.0 հազ. դրամը հատկացվելու է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի պահպանմանը:**

4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

6. ՄԻՋՈՒՂՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2025-2027 թթ. ժամանակահատվածի համար գիտական և գիտատեխնիկական բնագավառի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (ներառյալ գոյություն ունեցող պարտավորությունները) ամփոփվել է Մեթոդաբանությանը կից՝ Հավելված 8 -ում ներկայացված ձևաչափին համապատասխան:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկերի վերլուծության վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփել է Մեթոդաբանության ցուցումներին կից՝ Հավելված 10-ում ներկայացված ձևաչափին համապատասխան: